Ս. Հռիփսիմէի վանքը

ՀԱՅՈՑ ԳՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

տարի զիւտի 1500 ամեակի եւ տպագրութեան 400 ամեակի Ս. Էջմիածնի արգոյ յանձնաժողովը պարտաւորութիւն է դրել նուաստիս վրայ լուսանկարչական վերարտադրութեամբ կարճ բացատրութեան հետ ցոյց տալ հայ գրի զարգացումն ու տեսակները սկզբից մինչև մեր օրերը։ Մինչև այդ արդէն բաւական նիւթ ունէինք հաւաքած Մ. Աթոռի և ս. Երուսաղէմի հարուստ մատենադարաններից, մասամբ ևս աշխատել ենք լրացնել այդ յանձնարարութիւնն ընդունելուց յետոյ՝ ընտրելագոյն ձեռագիրներից և կարևոր արձանագրութիւններից։ Հնագոյն՝ Է. Ը. Թ. դարերի՝ արձանագրութիւններից զատ՝ որոնք հազուագիւտ մնացորդներն են հայ գրի և լրացնում են ձեռագիրների պակասը, յաջողել է մեզ ձեռք բերել նշանաւոր գրիչների, հայ մատենագիրների, թագաւորների, իշխանների և կաթուղիկոսների սեպհական գրութիւններ, որոնք անհատական ընոյթ կրելով հանդերձ, լաւագոյն նիւթ են հայ գրի զարգացման պատմութեան։ Տարազ-ի յարգոյ խմբագիր պ. Տիգրան Նազարեանի ցանկութեան համաձայն՝ տալիս ենք մի քանի օրինակ հայ գրի տեսակների, որպէս շնորհաւորութիւն յոբելեանական տարւայ սկզբնաւորութեան, գործի ամբողջութիւնը թողնելով Էջմիածնի գիտնական ժողովածուի մէջ հրատարակելու։

Հայոց գիրը միանգամից չէ զարգացել և ներկայ դրութեան հասել. ս. Մեսրոպի ձևակերպած այբուբենը ժամանակի ընթացքում գիտակցաբար և անգիտակցաբար փոփոխութեան է ենթարկուել և հետզհետէ կատարելագործուել։ Ի՞նչ ձևի և տեսակի գրեր է յօրինել ս. Մեսրոպը և ինչպիսի՞ զարգացման ընթացք ստացել, միայն բանասիրութիւնը կարող է լուսաբանել և մօտաւոր գաղափար տալ այդ մասին։ Այն գիտութիւնը, որ զբաղւում է գրերի ծագման և զարգացման պատմութեամբ, նրան յարակից խնդիրներով, կոչւում է հնագրութիւն (Palaographie)։ Այդ գիտութիւնը շատ կարևոր նշանակութիւն ունի հայագիտութեան համար. նա ոչ միայն դիւրացնում է ձեռագիրների ուսումնասիրութիւնները նորահաս գիտնականների համար, այլ և յաճախ լուսաբանում է խնդիրներ, որ առանց հնագրութեան անհնար կըլինէր վերջնական եզրակացութեան հասնել։

Թւականով յայտնի շատ հին ձեռագիրներ մեր ձեռքը չեն հասել, ինչպէս յոյներն ու ասորիներն ունին Ե. և Զ. դարերից. բարբարոսութիւնը մի կողմից, և ապա հին գրերի խոշորութիւնն ու դժւարընթեռնելիութիւնը, հաստափոր ձեռագիրների թանգութիւնը պատճառ են դարձել հին ձեռագիրների չքացման։ Ձեռագիրների կազմին կցւած են շատ անգամ պահպանակներ, կտրւած հնագոյն մագաղաթի մատեաններից, որոնց արժէքը, սակայն, քիչ է, թւական չունենալու կամ պատառիկ լինելու պատճառով։ Նոքա կարող են միայն նիւթ լինել թւականով ձեռագիրների համեմատութեամբ գրութեան դարը և գրերի հնագոյն ձևերը որոշելու համար։ Կան և կրկնագիր Palimpsest կոչւած մագաղաթի ձեռագիրներ կամ պատառիկներ, որոնք յետին գրիչների կողմից քերւած են և ժամանակի գրչութեամբ նրանց վրայ գրած իրենց ցանկացածը։ Քիմիական միջոցներով այժմ հնարաւոր է այդպիսի քերուածը ընթեռնելի դարձնել, բայց տարբարդդաբար հին թւականով կրկնագիրներ յայտնի

Նկ. Ա. փորագրւած ս. Հռիփսիմէի վանքի պատի վրայ։

Հայոց գիրը միանգամից չէ զարգացել և ներկայ դրութեան հասել. ս. Մեսրոպի ձևակերպած այբուբենը ժամանակի ընթացքում գիտակցաբար և անգիտակցաբար փոփոխութեան է ենթարկուել և հետզհետէ կատարելագործուել։ Ի՞նչ ձևի և տեսակի գրեր է յօրինել ս. Մեսրոպը և ինչպիսի՞ զարգացման ընթացք ստացել, միայն բանասիրութիւնը կարող է լուսաբանել և մօտաւոր գաղափար տալ այդ մասին։ Այն գիտութիւնը, որ զբաղւում է գրերի ծագման և զարգացման պատմութեամբ, նրան յարակից խնդիրներով, կոչ-

Հայութեան հոգու, սրտի, մտքի լուսատու՝ Խորան

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ



ս. Գիրք ս. Էջմիածնայ Թանգարանում



№ 229, 136 բ. պատկեր բ.

չեն և եղածները մանրամասն ուսումնասիրութեան չեն ենթարկված։

Թւականով մինչև այժմ յայտնի ձեռագիրը Թ. դարից է, 887 թւականից, որ պահւում է Լազարեան ճեմարանի մատենադարանում և հրատարակւած է լուսատիպ նմանութեամբ հանգուցեալ պրոֆ. Խալաթեանի ձեռքով և իշխան Աբամելիք-Լազարեանի հաշւով։ Ժ. դարից արդէն ունենք մօտ տասն Աւետարան և այլ ձեռագիրներ։ Այս պակասը պէտք է լրացնենք արձանագրութիւններով, որ գոնէ Է. Ը. և Թ. դարերի համար մի քանի օրինակներ ունինք թւականով և ժամանակով յայտնի։



№ 124, 179 բ. պատկեր գ.

Ունինք և մոզայիկների հետ մի քանի արձանագրութիւն Երուսաղէմում, բայց առանց թւականի, թէպէտ և համարւում են աւելի հին, քան վերոյիշեալ թւականով և ժամանակով յայտնի արձանագրութիւնները։

Հայ գրչութեան ծագման լաւագոյն շրջանը՝ որակով և քանակով՝ ԺԲ. դարու վերջերից սկսած մինչև ԺԴ.-ի առաջին կէսն է, երբ տիրապետող է հանդիսանում գրի այն տեսակը, որ ընդունւած է այժմ տպագրութեան մէջ և յայտնի է բոլորագիր անունով։ (Տես նկարը։) Գրչութեան արուեստին համընթաց է նաև մանրանկարչականը. շատ անգամ մինչև իսկ նշանաւոր գրիչներ մի և նոյն ժամանակ և մանրանկարիչներ են, ինչպէս Թորոս Ռոսլին, Մարգիս Պիծակ և այլն։ Նոյնը, կարծես, կարող ենք ասել նաև երկաթագրի մասին. Է. դարը հայ ճարտարապետական արուեստի զարգացման լաւագոյն շրջաններից մէկն է. այդ դարից մնացած արձանագրութիւններն էլ իրենց գեղեցկութեամբ և կանոնաւորութեամբ գերազանցում են Ը. Թ. և Ժ. դարու սկիզբների արձանագրութիւններին, որքան էլ վերջիններս քիչ լինեն համեմատութեան համար։ Երկաթագրի զարգացման հայրենիքը Հայաստանն է, իսկ բոլորագրինը՝ Կիլիկիան։ Այնտեղ հայ թագաւորներն ու իշխանները, կաթողիկոսներն ու եպիսկոպոսները հովանաւորել են գրչութեան և նրա հետ կապւած մանրանկարչական արուեստը. այդ շրջանի լաւագոյն ձեռագիրները բարձրաստիճան անձանց սեպհականութիւն են մեծ մասով։

Հայ գրի տեսակները չորսի կարելի է բաժանել. երկաթագիր, բոլորագիր, նոտրագիր եւ շեղագիր, իւրաքանչիւրը ստորաբաժանումներով և անցման շրջաններով։ Երկաթագիրը հայ գրի խոշոր տեսակն է (Նկար ա. բ.), որ գործադրւած է ձեռագիրների մէջ մինչև ԺԳ. դարը, ներկայ տպագրութեան գլխատառերը։ Երկաթագրի միւս տեսակներն են մէջին (պատկեր գ.) և փոքր երկաթագիրները (պատկեր դ.) իրենց պէսպիսութիւններով։ Հին արձանագրութիւնների գիրը սովորաբար խոշոր կամ Մեսրոպեան երկաթագիրն է, բայց կան նաև անցման բոլորագրով և շեղագրով արձանագրութիւններ։



№ 1561, 10 ա. պատկեր դ.

Ներսէս Լամբրոնացու համար պատրաստած Նարեկից։

ԺԲ. դարու կէսերից արդէն երկաթագիրը տեղի է տալիս բոլորգրին, (պատկեր ե. զ. է.), որ, ինչպէս վերև նկատեցինք, ներկայ տպագրութեան գիրն է և կատարելապէս տիրապետող է դառնում ԺԳ. դարում։ Նոտրագիրը (պատկեր ը.) գործադրւել է սկսում ԺԴ. դարից, բայց ոչ երբէք այնպիսի ընդարձակ ծաւալով, ինչպէս բոլորագիրը։ Գրքերի մէջ ամենից քիչ ընդունելութիւն է գտել շեղագիրը (պատկեր թ. ժ.), որ մեր ներկայ սովորական գործածութեան գիրն է, համեմատաբար աւելի դիւանական թղթերում, անհատական յիշատակարաններում, հաղագիւտ դէպքում նաև արձանագրութիւնների մէջ։ Ռուբինեանց իշխանների և յետին շրջանի կաթուղիկոսների դիւանական թղթերն ու կոնդակները գրւած են շեղագրով կամ նոտրագրով։

Կան գրութիւններ, որոնց ընդհանուր բնոյթը երկաթագիրն է. բայց հատ-հատ տառեր բոլորգիր, ինչպէս և կան ձեռագիրներ կամ արձանագրութիւններ, որոնք ընդհանուր բնոյթով բոլորագիր են, բայց որոշ գրեր երկաթագիր։ Այդ տեսակ գրերը անցման երկաթագիր կամ անցման բոլորագիր են կոչւում և ունին իրենց պէսպիսութիւնները։

Ո՞րն է սրանցից ամենահինը։ Առաջ շատ հեշտութեամբ պատասխանը գտնւած էր համարւում. հնագոյնը երկաթագիրն է, ապա բոլորգիրը, ապա նոտրագիրը և ի վերջոյ շեղագիրը, որոշւած էին մինչև իսկ ծագման շրջանները։ Այս տպաւորութիւնը կարող է ստաց-



Գ. Յ. № *102, 233* բ. պատկեր *Ե.*
թղթի ամենահին ձեռագիր

ւել և մեր այս թռուցիկ նկատողութիւններից։ Բայց ձեռագիրների և գրի տեսակների աւելի լուրջ ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, թէ հնագոյն ձեռագիրների մէջ երբեմն երկաթագրի հետ գործածուած են բոլորագրի զանազան տեսակներ Ժ. դարում և աւելի առաջ։ Շեղագրի օրինակ տեսանք ԺԳ. դարու սկզբից (պատկեր Թ.), բայց կան աւելի հնագոյնները։ Իրողութիւնն այն է, որ երկաթագիրը իւր տեսակներով տիրապետող է եղել մինչև ԺԲ. դարը, այնուհետև տիրապետող է դարձել բոլորագիրը, և երկաթագիրը գործածութիւնից դուրս եկել ձեռագիրների մէջ։ Արձանագրութիւնների մէջ նա պահել է իւր տիրապետութիւնը և յետագայ դարերում։ Նոտրագրով ձեռագիրներ համեմատաբար աւելի կան, քան շեղագրով, բայց երկուսն էլ երբէք միւս երկու գրերի նման ընդհանրութիւն չեն գտել, այլ առօրեայ գործածութեան գրեր են մնացել, մանաւանդ շեղագիրը։ Գրերի անունների մասին հնոց վկայութիւններ ունինք ձեռագիրների մէջ, բայց ոչ ծագման։ Է. դարու առաջին քառորդի և աւելի հին համարուած (Երուսաղէմի մոզայիկների արձանագրութիւնները) արձանագրութիւնների հիման վրայ ասել կարող ենք, որ խոշոր և միջին երկաթագիրներն իրենց հնութեամբ հասնում են մինչև Ե. դարը։ Ս. Մեսրոպի ձեւակերպած պաշտօ-



№ *2660—285* բ., պատկեր *Զ.*
Նշանաւոր նկարիչ եւ գրիչ Թորոս Ռօսլինի ձեռքը։

նական գիրը անպայման երկաթագիրն է եղել, որ գործածուել է եկեղեցական պաշտաման և այլ գրքերի համար։ Գրի միւս տեսակները որչափ հին են, հաստատուն կուան չունինք այդ մասին, բայց անհաւանական չէ, մէկը կամ երկուսը (յատկապէս բոլորագիր) նոյնչափ հին լինին։ Երկաթագիրը իւր խոշորութեան և դժւարագիծ լինելու պատճառով անկարելի էր առօրեայ, սովորական պէտքերի համար գործածել։ Այդպիսի նպատակի համար աւելի յարմար են գրի միւս տեսակները՝ բոլորագիրն ու շեղագիրը, ի հարկէ ոչ իրենց կատարելագործուած ձևերով։ Բոլորագրի հնութեան նշաններն աւելի են, քան շեղագրինը։

Թւականով մեզ յայտնի ամենահին գիրը Կոմիտաս կաթողիկոսի երկու արձանագրութիւններն են՝ իւր շինած ս. Հռիփսիմէի տաճարի վրայ (պատկեր Ա)։ Հռիփսիմէի տաճարը երկու ժամանակակից պատմիչների վկայութեամբ, որոնցից մէկն ականատես, շինուած է 619 թւականին։ Տեկորի արձանագրութիւնը, որ Ե. դարու վերջին քառորդի մնացորդն էր համարւում, պրոֆ. Մառի և Թ. Թորամանեանի կողմից կասկածի է ենթարկուած։ Յիշատակութիւններ ունինք Զ. դարու արձանագրութիւնների մասին Մակար եպիսկոպոս Բարխուդարեանի «Աղուանից երկիր եւ դրացիք» աշխատութեան մէջ, բայց վստահելի չեն այդ տեղեկութիւններն առանց քննութեան և լուսանկարչական պատկերների։ Անթւական գրութիւնների մէջ ուշադրութեան արժանի են երկուսը. մէկը՝ Եգիպտոսում գտնուած և հանգուցեալ հայագէտ Գարիների ձեռ-



№ *2563—8, 378* ա., պատկեր *Է.*

քով յայտնի դարձած պապիրուսի վրայ հայատառ յունարէն հատուածը և միւսը Երուսաղէմի հայ մոզայիկների հետ բացուած արձանագրութիւնները։ Պապիրուսի մի հատուածը հրատարակել է հ. Յակոբոս Տաշեան *) և 640 թւականից արաբական տիրապետութիւնից առաջ գրուած է համարում Եգիպտոսում։ Մոզայիկ արձանագրութիւնները Ե—Զ. դարու գրութիւններ են համարւում և եթէ ստուգւի այդ կարծիքը, հնագոյն գիրը կունենանք։ Ձեռքի տակ ունինք այդ արձանագրութիւնների լուսանկարչական և նմանագրութեամբ պատկերները, որ կըհրատարակւի վերոյիշեալ ժողովածուի մէջ։

Ինչպէս ասացինք, թւականով հնագոյն ձեռագիրը Լազարեան ճեմարանի Աւետարանն է։ Տասներորդ դա-



Պատկեր Ը.

րի ձեռագիրներ ունինք տասի չափ, որոնցից մէկն է Մ. Աթոռի մատենադարանի փղոսկրէ կազմով Թանգ-

*) *Ակնարկ մը Հայ հնագիտութեան վրայ. Վիէննա,* 1898. *եր.* 97։

Պատկեր ԺԱ.

Զարդագրեր, որ մանրանկարչական արուեստի մի ճիւղն է

արժէք Աւետարանը, իր կազմով և մանրանկարներով արուեստի պատմութեան ամենակարևոր յիշատակարաններից մէկը։ Ահա այդ Աւետարանի գրութիւնից մի հատուած (№ 229, 136բ. պատկեր Բ.), որ գաղափար է տալիս ս. Հռիփսիմէի արձանագրութեան հետ (պատկեր Ա.) Մեսրոպեան, խոշոր երկաթագրի մասին։ Միջին երկաթագրի մի օրինակ տալիս ենք Գրիգորիս Վկայասիրի սեպհականութիւն համարուած մի ձեռագրից (№ 124, 179բ. պատկեր Գ.), իսկ փոքր երկաթագրի (№ 1561, 10ա. պատկեր Դ.) Ներսէս Լամբրոնացու համար պատրաստուած Նարեկից՝ 1173 թուի։

Բոլորագրի ծաղկեալ շրջանը ԺԳ. դարն է Կիլիկիայում, բայց նրա ծագումը շատ աւելի վաղ է։ Եթէ հնագոյն ժամանակներից ԺԳ. դարին յատուկ գեղեցիկ և կանոնաւոր բոլորագիր չունինք, հաղուագիւտ չեն գրութեան ձևեր, որոնց մէջ բոլորագրի յատկանիշներով շատ տառեր կան և ընդհանուր առմամբ բոլորագրի տպաւորութիւն են թողնում։ Այսպէս է օրինակ մեր մատենադարանի (Գ. ց. № 102, 233բ, պատկեր Ե.) թղթի ամենահին ձեռագիրը՝ գրուած 97 թուականին։ ԺԳ. դարու բոլորագրի ընորոշ օրինակներ կարող են լինել Երուսաղէմի մատենադարանի երկու ձեռագիրներ։ Առաջինը (Ներ. № 2660/105, 285բ. պատկեր Զ.) նշանաւոր նկարիչ և գրիչ Թորոս Ռոսլինի ձեռքն է.



Պատկեր Թ.

նա բազմաթիւ ձեռագիրներ ունի գրած և զարդարկարած արքայական տան և Կոստանդին կաթուղիկոսի համար։ Երկրորդի (Ներ. № 2563—8, 378ա, պատկեր Լ.) գրիչն է Աւետիս, ինչպէս յիշատակարանից առնուած հատուածից տեսնել կարելի է։ Վերջին ձեռագիրը Լևոն Գ.-ի և նրա թագուհու Աւետարանն է նկարազարդուած սքանչելի պատկերներով, ի միջի այլոց և արքայական ընտանիքի։ Չափազանց բազմաձև են բոլորագրի տեսակները. պէտք է աշխատել ըստ կարելոյն շատ ձևեր մատչելի դարձնել ընդհանրութեան, տպագրութեան արուեստը ճոխացնելու և տառերը ազնուացնելու գործնական նպատակով։

Նոտրագրի մի օրինակ տալիս ենք Գրիգոր Դարանաղցու աշակերտ Պետրոս երէցի գրած (պատկեր Ը)։ Դարանաղցին ԺԷ—ԺԸ. պատմութիւնն ունի գրած, որ մինչև այժմ հրատարակուած չէ։ Միակ լիակատար օրինակը, որ հաւանօրէն հեղինակի գրածն է, գտնուում է Երուսաղէմի մատենադարանում։

Շեղագրի մի օրինակ տալիս ենք ԺԳ. դարու սկզբից (№ 999, պատկեր Թ.) և միւսը ԺԸ. դարու վերջերից, որ սովորական գրութեան մի ձև է (պատկեր Ժ.)։

Հայոց գրի մի այլ տեսակն է Զարդարագիրը, որ



Պատկեր Ժ.

մանրանկարչական արուեստի մի ճիւղն է։ Զարդագիրն ընդհանրապէս գրի զարգացման աւելի բարձր շրջանին է պատկանում. նա շքեղութեան պահանջի արդիւնք է և ոչ իսկական կարիքի։ Հնագոյն արձանագրութիւնների և ձեռագիրների մէջ զարդարագրեր չեն գործածուում։ Գրի այդ տեսակը հայոց մէջ սկսւել է հաւանօրէն ոչ աւելի վաղ, քան Թ. դարը. մեացորդներ ունինք Ժ. և ԺԱ. դարերից, իսկ զարգացման բարձր շրջանը ԺԲ. դարու վերջերից մինչև ԺԴ.-ի սկիզբն է։ Այդ շրջաններում հայ մանրանկարիչները թռչուններից, կենդանիներից, մարդուց, բուսական և երկրաչափական զարդարանքներից սքանչելի, գեղանկար զարդագրեր կամ ծաղկագրեր են կազմում, որ իրենց նրբութեամբ, ճաշակով և գեղեցկութեամբ մրցել կարող են հարևան, բարձր քաղաքակրթութեամբ աղգերի հետ։ Ճոխ են յատկապէս արքայական կամ իշխանական ձեռագիրները, ինչպէս Հեթում Բ.-ի Ճաշոցը, որ գրուած է Լևոն Գ.-ի թագաւորութեան վերջին տարիները։

Ծաղկագրերը կամ զարդագրերը, բայց ոչ կենդանագրերը, գործածուած են և արձանագրութիւնների մէջ. այստեղ բերած օրինակն առնուած է Վայոց Ձորի Ամաղուի Բուրթելաշէն եկեղեցու արևելեան պատից (պատկեր ԺԱ.), որ առաջին անգամ հրատարակել է հանգուցեալ Ալիշանը իր Սիսականի մէջ (եր. 202)։

—

Այս յօդուածը գրուած է ժողովրդի համար. ուստի և խուսափել ենք մասնագիտական խնդիրներից։

ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐԴԱՊԵՏ

Ս. Էջմիածին։